# ԹԵՄԱ 1



# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐ: ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԴԱՍ 1.3 Աշխարհագրական հետազոտության հիմնական մեթոդները

### Գիտե՞ս որ...

*Օրինակ՝ այդպես է առաջացել Բուժումբուրա անվանումը: Բուժումբուրան Բուրունդի պետության մայրաքաղաքի անվանումն է, որը տեղացիների լեզվով նշանակում է «կարպոֆիլի վաճառահանման շուկա», առևտրի վայր: Այսօր էլ այդ քաղաքը հարևան երկրների համար համարվում է վաճառաշահ բնակավայր:*

*Տաջիկստանի մայրաքաղաքը Դուշանբեն է: Տեղացիների լեզվով Դուշանբե նշանակում է երկուշաբթի: Այդ օրը նրանց համար ամենալավ օրն է համարվել, որովհետև քաղաքի տեղում գործել է աշխույժ տոնավաճառ:*